

անոր զենուամբ Ծննդեան, Զատկին ու Վարդավառին (ՂԱ): Բայց ասկից կ'ուսանինք գառին աւելի ընդարձակ գործածութիւնը՝ քան առաքելականութիւնը, որ երեւակայական է, եւ արդիւնք Ա Առաքելական անվաւեր կանոնաց (ԺԱ), որոց կ'ապաւինի Որբելեանն ալ (Հկճ. Ժ): Իսկ Շնորհալին կը կարծէ՝ թէ Լուսաւորիչ զտկական գառն «ի Հոովմայ եկեղեցւոյն ընկալաւ եւ աւանդեաց»: Արդարեւ՝ ինչպէս ինք կ'ըսէ, դեռ իւր օրով ալ կը պահուէր այն «յամենայն եկեղեցիս փռանկաց» (Ընդհ. 158): Բայց թէ Լուսաւորիչ անոցմէ ընդունեցաւ, կրնայ ձրի լինել, կամ փոխառութիւն Տարօնացիէն, որ ադն ու գառն առնուած կը համարի «ի սուրբ հայրապետէն Հոովմայ», եւ միասին կերած (Թէոփ. 306), ակնարկելով անշուշտ Լուսաւորչին ի Հոովմ այցելութեան: Սակայն աւելի դրական է կարծել՝ թէ Հայք հրէական ոչխարը Տարօնացիէն կամ Դամասկացիէն վերջ՝ այն է ժԲ դարու առաջին կիսուն՝ փոքրկացուցին ժամանակի հոովմէական գառին պէս, որպէս զի իրենց հակառակորդաց դէմ կռուան մ'ունենային արեւմտեան մեծ եկեղեցւոյն սովորոյթը: Եւ Տաթեւացին մեր ու լատինաց նմանութեանց մէջ կը թուէր նաեւ «գառն զենուլ ի տօնս»